# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 64-Լ

«10» 09 2025թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Խաչատուրի Խալաթյանին Լոռու կայազորի զինվորական դատախազի պաշտոնին փոխադրելու և Արշակ Արտակի Մարտիրոսյանին Երևանի կայազորի զինվորական դատախազի պաշտոնին փոխադրելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 02.09.2025թ.՝ համապատասխանաբար՝ N 371-Ա և N 372-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Կատարել Գ. Խալաթյանի կողմից՝ Երևանի կայազորի զինվորական դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա. Մարտիրոսյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

| | |
|---|---|
| Էլիզբարյան Գրիգոր - | Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազ, գլխավոր դատախազի տեղակալ |

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Սարգսյան Վահե- | Երևանի կայազորի զինվորական դատախազի տեղակալ |
| Առաքելյան Ռուբեն - | Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ |

| | |
|---|---|
| Նազարեթյան Արմինե - | Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ |
| Ղահրամանյան Մարուշ - | Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար |
| Մանուկյան Լիաննա - | Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ |
| Համբարձումյան Աղասի - | Երևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԴԱՍԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա.ԱՐԱՄՅԱՆ